



**Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի Edu Armenia
Նախաձեռնություն**

**Ուսուցիչների պետական պարտադիր
վերապատրաստման
դասընթաց 2022**

Ջեոագրոտական աշխատանք

Թեմա՝ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

**Ջեոագրոտող ուսուցիչ՝ Լարիսա Ջամոյի Միրզոյան
Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն	1
2. Ներածություն	2-3
3. Գլուխ 1. Ուսուցման ակտիվ մեթոդները	4-9
4. Գլուխ 2. Վարկածի ներկայացում	10-17
5. Եզրակացություն	18
6. Գրականություն	19

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ցույց տուր, և ես կհիշեմ,

Ինձ հետ կատարիր և ես կսովորեմ»:

Ուսուցման ակտիվ մեթոդը այն ճանապարհն է, որ նախատեսում է ճանաչողական ու պրակտիկ գործունեության ընթացքում ինքնուրույն ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ:

Տարրական դպրոցի սաների ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մեթոդը՝ խաղ-ուսուցում, ուսուցում-խաղ մոդելներն են:

Խաղով ուսուցման ժամանակ երեխաների մեջ մշակվում է հանդուրժողականություն, լսելու կուլտուրա, համարձակություն, վստահություն ուժերի նկատմամբ, կանոններին ենթարկվելու, կանոններ սահմանելու, հետևողականություն, պատասխանատվություն, բնավորության այլ գծեր:

Դիդակտիկ, դերային խաղը սաների համար իսկական ճանապարհ է դեպիաշխարհի իմացությունը, սրանց միջոցով ճշգրտվում, ընդարձակվում են պատկերացումները շրջապատի, ընկերների, անձանոթների, բնության մասին: Ձևավորվում է միջանձնային հարաբերություններ ստեղծելու ճիշտ կենսաձև: Խաղը հնարավորություն է տալիս ուսուցչին դիտարկելու սանի վարքագիծը, կարողությունները, որը կարևոր է նրա անհատական ուսուցումը կազմակերպելու համար՝ շերտավորված ուսուցում:

Արտադասարանային միջոցառումները, դերային խաղը, հանդեսները, էքսկուրսիաները բացահայտում են սան-անհատին, առանց որի արդյունավետ ուսուցում կազմակերպել հնարավոր չէ:

«Ինչի՞ց սկսել», «Ինչպե՞ս սկսել», «Ինչու՞ սկսել» - յուրաքանչյուր ուսուցչիս կարևորագույն գերխնդիրն է մեր հասարակության համար արժանապատիվ արժեհամակարգով և գիտելիքներով «զինված» սանի դաստիարակության ճանապարհին:

«... Ե՛վ այն բանից, թե ինչպես է անցել այդ կյանքը, ով է բռնել երեխայի ձեռքը մանկական տարիներին: Ինչ է մտել նրա գիտակցության և սրտի մեջ շրջապատի աշխարհից: Վճռական կերպով դրանից է կախված, թե ինչպիսի մարդ կդառնա այսօրվա մանուկը»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Տարրական դպրոցում խաղային մեթոդով ուսուցանումը իմ նախընտրելի աշխատառճն է: Ինչու՞:

Խաղը ես ծառայեցնում եմ որպես նոր գիտելիքի ընկալման, նոր փորձի, տեղեկությունների հաղորդման ամենակարճ, արդյունավետ մեթոդը:

Խաղով ես բացահայտում եմ իմ սաներին, որ և առաջին պայմանն է նրանց ճանաչելու և հետագայում նրանց հետ աշխատելու, վերջնանպատակիս հասնելու գործում: Խաղով ես բացահայտում եմ իմ սաների

- ա) վարքային դրսևորումները,
- բ) հաղորդակցվելու կարողությունները,
- գ) ինչ ընտանիքում են դաստիարակվել,
- դ) մտավոր կարողությունները, և այլն:

Խաղով տարվելիս նրանք իրենց դրսևորում են այնպես, ինչպիսին կան իրականում:

Գլուխ 1. Ուսուցման ակտիվ մեթոդները

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը, բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած գիտելիքները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:

Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց, երեխաների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ զարգանում է երեխաների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներակացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Ջետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. *action- փոխազդեցություն*ն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն

աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս

դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՌԻՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները - մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՌԻՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՌԻՄ-ը - մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների

ակտվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈԻԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈԻԱՄ-ի կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում,
- Ինքնագործունեության խթանում,
- ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

Այս ուսումնական տարում իմ առջև նստեցին 35 աշակերտ: Նկարագրեմ այն աշխատանքը, որ ես կատարեցի նրանցից երկուսի հետ:

1. Աշակերտուհի Ա-ն: Տարիքով մեծ է (2013թ.) իր համադասարանցիներից (2015թ.): Ծնողները թերի միջնակարգ կրթությամբ, սոց. անապահով ընտանիք: Ընտանիքում III երեխան է: Չի խոսում, չի շփվում ոչ մեկիս հետ (լսում է): Մեկ-մեկ գլխի շարժումներով պատասխանում է հարցերին: Ծնողը՝ մայրը, ներկայացնում է, որ տանը ակտիվ է, խաղում է քրոջ ու եղբոր հետ: «Դպրոց ուշ եմ բերել, քանի որ վախենում էի, որ չի կարողանա սովորել» - ասում է մայրը:

2. Աշակերտ Բ-ն: Ագրեսիվ վարքային դրսևորմամբ, ակտիվ, մտավոր արտահայտված կարողություններով, ռուսախոս: Ծնողները ամուսնալուծված են: Ունեն բարձրագույն կրթություն: Երեխան միակ զավակն է, ապրում է մոր և տատիկի հոտ: Մայրը և տատիկը ունեն ռուսական կրթություն: Հաճախ է շփվում հոր հետ:

Համադասարանցիները չեն ուզում շփվել նրա հետ, քանի որ կռվարար է, վնասում է տետրերը, գրում է նրանց շորերի վրա: Դասարանում էլի կան «դժվար» հասկանալի սաներ:

Սովորել են նախակրթարանում, հաճախել են մանկապարտեզ կամ տանից են գալիս: Մի մասը գիտեն նույնիսկ գրել և հաշվումներ են կատարում 100-ի սահմաններում:

Նրանց համախմբելու, ուսուցումը արդյունավետ դարձնելուն օգնեց խաղը:

Նկարագրված երկու սաներս էլ միացան նրանց, դիդակտիկ նյութերը բաժանել և հավաքել, դարձան խաղավարներ, հրահանգիչներ, խմբային խոսնակներ, ծաղիկների խնամքի և դասարանական այլ աշխատանքների կազմակերպիչ: Սովորեցին լսել, ուշադրությամբ հետևել ընկերներին, աշխուժություն և զսպվածություն դրսևորել, բոլորի հետ լինել հավասար պայմաններում, ինքնուրույնություն դրսևորել և այլն:

Ես չեի վախենում, թե կարող է պատահել, որ սանը խաղը կգերադասի ուսումից: Նա ինքն է խաղի հետ ևս մեծարում իր սովորելու կարողությունը՝ ելնելով իմ ու իր ընկերների վերաբերմունքից: Նրանց տարիքային առանձնահատկություններից ելնելով է, որ պետք է կազմակերպվի ուսումնական գործընթացը՝ առանց անջրպետ ստեղծելու խաղի և ուսման միջև:

Գլուխ 2. Տեսության ներկայացում

Ուսման կազմակերպման եղանակները

Խմբային աշխատանք

Խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը

Ամենափոքր խմբում պետք է ընդգրկված լինի առնվազն 3 աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում է զույգերով կամ անհատական: Լավագույն տարբերակն այն է, երբ խմբում ընդգրկված է 4 աշակերտ. այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը, և, ավելին, անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել զույգերի: Վեցից ավելի աշակերտներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ կարող են որոշել չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին:

Միատարր և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորման մոտեցումներ

Միատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են:

Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են:

Վերջին դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու, որ յուրաքանչյուր անդամ, իր ընդունակությունների սահմաններում, ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Դերերի բաշխումը խմբում

Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր/առաջադրանք տալով:

Խմբում առաջադրանքներ և պարտականություններ բաշխելը կարող է ունենալ

երկակի ազդեցություն՝ մի կողմից այն ամրապնդում է գոյություն ունեցող շփման հմտությունները, մյուս կողմից այն ստեղծում և զարգացնում է այլ հմտություններ: Քանի որ սկզբնական շրջանում աշակերտները չեն կարող ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքը, արդյունավետ կլինի, որ ուսուցիչը բաշխի դերերը: Այս եղանակով մի կողմից հնարավոր է ժամանակ խնայել, մյուս կողմից յուրաքանչյուր երեխայի հանձնարարվում է իր ընդունակություններին առավել համապատասխան աշխատանք: Այնուամենայնիվ, աշակերտներին պետք է նաև նոր դերերում իրենց փորձելու հնարավորություն տրվի: (Օրինակ այն աշակերտը, որը սովորաբար առաջնորդի դեր է ստանձնում, պետք է սովորի հարգել և համագործակցել առաջնորդի դեր ստանձնած այլ աշակերտների հետ, իսկ ամաչկոտ աշակերտները պետք է փորձեն հրապարակավ արտահայտվել:)

Խումբ ձևավորելու եղանակները

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով: Ակնհայտ է, որ վերջին տարբերակն ուսուցչին հնարավորություն կտա հասնելու իր դիդակտիկ նպատակներին, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովել արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝

- ընդունակությունը և գիտելիքը,
- անձնական համակրանքը,
- գենդերային հավասարակշռությունը,
- էթնիկ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

Խմբային աշխատանքի առավելությունները

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա՝

- միասին մտածելը,
- հարմարվելու ունակությունը,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու/համոզելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը,
- խմբի մաս լինելու փորձը:

Չույգերով աշխատանք

«Չույգերով աշխատանք» և «Միասին սովորող զույգեր» հասկացությունները Չույգերով աշխատանքի ընթացքում, նույն ընդունակություններով երկու աշակերտ աշխատանքը կատարում են միմյանց հետ համագործակցելով: Սա միատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:

Միասին սովորող զույգերի դեպքում աշակերտներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը (ուսանում ուսուցանելու ընթացքում): Սա բազմատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:

Չույգերով թե՛ խմբային աշխատանք

Փորձը ցույց է տալիս, որ 6-10 տարեկան աշակերտներն առավել արդյունավետ են աշխատում զույգերով, երբ երկուսն էլ հավասարապես համագործակցում են:

Անհատական աշխատանքը

Անհատական աշխատանաի հասկացությունը

Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում: Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է անհատականացում: Այն հատկապես օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Ինքնուրույն և անհատականացված աշխատանքի տարբերությունը

Ինքնուրույն աշխատանքը կարող է կատարվել անհատական եղանակով, զույգերով կամ խմբային աշխատանքի արդյունքում: Կարևորն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Անհատականացված աշխատանքի դեպքում առաջադրանքը մշակված է տվյալ անհատի կարիքներին համապատասխան:

Մասամբ անհատականացված աշխատանք

Նույն մակարդակն ունեցող բոլոր աշակերտներն նույն առաջադրանքը կատարում են ինքնուրույն:

Մասամբ անհատականացված և խմբային աշխատանքի տարբերությունն այն է, որ մասամբ անհատականացված աշխատանքը կատարվում է ինքնուրույն, առանց

համագործակցության, մինչդեռ խմբային աշխատանքի հիմքում ընկած է համագործակցությունը:

Դիդակտիկ խաղ

Յուրաքանչյուր դիտակտիկ խաղ ունի իր նպատակը ծանոթացնել թվերի բնական շարքին, զարգացնել բանավոր համրանքը, ծանոթացնել երկրաչափական պարզ ձևերին և այլն: Խաղերում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, որոնք երեխաներին կմղեն փոխօգնության, աշխատանքի արդյունքը համատեղ քննարկելուն, դրական հույզերի առաջացմանն ու զարգացմանը: Յուրաքանչյուր երեխա անհատականություն է, ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի ու հմտությունների զարգացման համար: Երեխաները պետք է ունենան ընտրության ազատություն, որը նպաստում է նրանց ինքնագիտակցության բարձրացումը և զարգացում է ազատ կամքը: Երբ երեխաներն իրենց մտքերն ազատ արտահայտելու հնարավորություն են ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին ավելի լավ ճանաչել նրանց, այլև նպաստում է երեխայի ինքնաճանաչողությունն ու ինքնահաստատմանը: Խաղերը համապատասխանում են ժամանակակից երեխաների հնարավորություններին, հետաքիքը են նրանց, օգնում են բացահայտելու նրանց անհատական առանձնահատկությունները, շրջապատի հետ հաղորդակցման հմտությունները:

1. Թվերն ու պատկերները

Նպատակ. Ամրապնդում է գիտելիքները թվի պատկերի վերաբերյալ, հմտացնում գիտելիքները երկրաչափական պատկերների վերաբերյալ:

Անհրաժեշտ պարագաներ. Եռանկյունի, շրջան և քառակուսի, ամեն մեկից 5 հատ ամեն խաղացողին: Բոլոր խաղացողներին 1-5 թվանշաններով քարտեր:



0 1 2 3 4 5

Խաղաղվարը երեխաներին առաջարկում է սեղանին դնել մեկ քառակուսի: Այնուհետև հարցեր է տալիս: Օրինակ. «Քարտերի օգնությամբ ցույց տուր թանի քառակուսի է դրված սեղանին»: Արտասանիր թիվը: Այնուհետև երեխաներին առաջարկեք սեղանին դնել ևս մեկ քառակուսի և նույնպես խաղաքարտերի օգնությամբ թող ցույց տան, թե թանի քառակուսի է դրված սեղանին: Նույն գործողությունը անում ենք շրջանի և եռանկյան հետ:

2. Ջետո և առաջ

Երեխաները կանգնում են կողք կողքի, խաղաղվարը նրանց հարցնում է, թե ով է կանգնած նրանցից հետո կամ առաջ:

3. Ջետ հաշվարկ

Եթե երեխան սովորել է վարժ հաշվել, ապա ճիշտ ժամանակն է սովորել հակադարձ հաշվել: Ուսուցչուհին երեխային առաջարկում է թմրալ: Սկզբից թռնում է առաջ և հաշվում է առաջ, իսկ երբ թռնում է հետ՝ հաշվում է հետ: Այսինքն երեխան հաշվում է. 1,2,3,4,5... հետո թռնում է հետ և հաշվում 5,4,3,2,1:

4. Կոմբինատորիկա 1

Ունենք



վագոններ

Բանի՞ հնարավոր ձևով կարելի է պատրաստել գունավոր գնացք, եթե կապույտ գույնի վագոնը պետք է միշտ լինի երկրորդ տեղում:

$$3 \times 2 \times 1 = 6 \text{ դեպք}$$

5. Կոմբինատորիկա 2



Տուփի մեջ 3 սև ու 2 դեղին մատիտ կա: Մթության մեջ ամենաքիչը քանի՞ մատիտ վերցնենք, որպեսզի դրանց մեջ գոնե 1 դեղին մատիտ լինի:

$$3+1 = 4 \text{ մատիտ}$$

6. Ամրակներով չափումներ

Երբ երեխաները նոր են սովորում չափել, նրանցից շատերը դժվարանում են քանոնն օգտագործելու մեջ ստանդարտ միավորներով սանտիմետրերով կամ միլիմետրերով չափումներ անել: Որպեսզի երեխան չափման եռությունը և չափման միասնական միավորների կառավարման անհրաժեշտությունը հասկանա, հիմնականում օգտակար է լինում նրան առաջարկել երկարությունը չափել ձեռքի տակ եղած մանր իրերով՝ ամրակներով, մատիտներով և այլն:

7. Մտածիր և պատասխանիր



Խաղավարը առաջարկում է երեխաներին ասել, թե ինչն է իրենցից յուրաքանչյուրի մոտ երկու հատ: Փորձեք նրանցից ստանալ տարբեր

պատասխաններ, դրա համար հարցրեք. «Իսկ դու ի՞նչ ես կարծում, ինչն է քեզ մոտ երկու հատ» (երկու ականջներ, երկու ձեռքեր, երկու ափեր, երկու ծնկներ և այլն):

Ամեն ճիշտ պատասխանի դեպքում երեխային տրվում է մեկ խաղանիշ: Խաղի ավարտից հետո խաղավարը երեխաների հետ միասին հաշվում է, թե ում մոտ են ավելի շատ խաղանիշեր և ով է հաղթել:

8. Ի՞նչն է լինում 4 հատ

Երեխաները ասում են. Թիթեռնիկն ունի չորս թևեր, սեղանը ունի չորս ոտքեր, չորս գրպաններ ունեն տաբատները և այլն:



Ամեն ճիշտ պատասխանի դեպքում երեխան ստանում է մեկ խաղանիշ: Խաղի ավարտին պարզվում է, թե քանի խաղանիշ անի յուրաքանչյուր երեխա և ով հաղթել:

9. Չսխալվես

Երեխաները շրջան են կազմում: Խաղավարը կանգնում է շրջանի մեջտեղում, գնդակը նետում է խաղացողներից մեկին և ասում որևէ թիվ: Երեխան, ով վերցնում է գնդակը ասում է այդ թվի հաջորդ թիվը և գնդակը նետում խաղավարին:

Խաղը պետք է խաղալ շատ արագ, և խաղին պետք է մասնակցեն բոլոր երեխաները

10. Ո՞ր թիվն է փախչել

Ամրապնդում է գիտելիքները թվի պատկերի վերաբերյալ, և զարգացնում է տեսողական ընկալումը:

Երեխան ուշադիր նայում է քարտերին, որի վրա պատկերված են թվեր, և պատվում է:

Խաղավարը փոխում է թվերի տեղերը: Այնուհետև երեխան փնտրում է թե՛ ինչն է փոխվել: Եթե թվերից մեկը անհետանում է, ապա երեխան պետք է ասի, թե որ թիվը չկա:



Եզրակացություն

«Ավելի շատ խաղ, ուրախություն ու զվարճալիք պետք է լինի, և համեմատաբար քիչ՝ լուրջ աշխատանք, ավելի քան պարտադրանք, շատ վարժեցում» - այսպես էր ասում պրոֆեսոր Աշոտ Տեր-Գրիգորյանը, որը մեզանում 6 տարեկանների ուսուցման I գիտափորձի հեղինակն է դել, ում աշակերտելու բախտ եմ ունեցել:

Խաղի հատկություններից մեկը հարկադրանքի բացակայությունն է:

Ուսուցման խաղային մեթոդը, որը ես շատ եմ կարևորում և հիմնվում եմ դասվանդման ողջ ընթացքում հնարավորություն է ընձեռում ճանաչել իմ սանին:

Խաղը պարունակում է ակտիվ շարժում, հետևաբար շրջակա աշխարհի անընդհատ հետազոտում: Խաղը ապահովում է նոր տեղեկությունների, ինֆորմացիայի մշտական նորացում՝ ճանաչողական, իմացական դաշտի ընդլայնում:

Այս մշտական աճը հնարավորություն է տալիս իմացածին նորը ավելացնելու, ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու:

Ուսուցումն ակտիվ մեթոդը՝ խաղը, երևակայության իր ազատ թռիչքով, այդ երևակայության իրական լինելու նկատմամբ ունեցած հավատով և մինևույն ժամանակ որոշ կանոնների սահմանափակումների ճանաչմամբ, անտարակուսելի նշանակություն ունի ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու գործում:

Խաղը աշակերտի համար իրական ճանապարհ է դեպի աշխարհի իմացությունը, որի մեջ ապրում են նրանք:

«Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Գրականություն

1. «Ջանրակրթական պետական չափորոշիչ», «տարրական դպրոցի չափորոշիչներ»
2. Edu Armenia «Ուսումնառության ակտիվ մեթոդներ»
3. Ա. Տեր-Գրիգորյան, «Խոսքի զարգացման մեթոդիկա», Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտ», Երևան 1974թ.
4. Վ. Ա. Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Լույս, Երևան 1978թ.
5. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան «Վեց տարեկան երեխաների ուսուցման առանձնահատկությունները» Էդիթ Պրինտ - 2007թ.
6. Մ. Մորո, Գ. Վ. Բանտովա «Մաթեմատիկա-1» 1974թ.
7. Լ. Ն. Լանս «Մտածելու կարողությունը, ինչպե՞ս սովորեցնել մտածել», Լույս – 1978թ.